ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N ԱԳ/1003-2025 «___»____________ 202__ թ.

«Հետք»-ի լրագրող Սյուզաննա Օհանյանին
(էլ. փոստ՝ syuziohanyan7@gmail.com)

Հարգելի՛ տիկին Օհանյան,

Ի պատասխան Ձեր 2025 թվականի հունվարի 13-ի հարցմանը՝ հայտնում ենք հետևյալը.

Կադաստրային գործերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Երևան քաղաք, Գայի պողոտա, 14/3 հասցեով, 01-008-0022-0119 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի արխիվացված կադաստրային գործը սկսում է 1998 թվականի հոկտեմբերի 14-ի N 1896 դիմումով և կից ներկայացված փաստաթղթերով, որի արդունքում Երևանի քաղխորհրդի գործկոմի 01/12/1995 թվականի N 45/22 որոշման և Երևանի քաղաքապետարանի ճարտարապետաշինարարական վերահսկողության բաժնի 12/08/1997 թվականի N 548 թույտվության հիման վրա 1998 թվականի դեկտեմբերի 18-ին կատարվել են իրավունքների պետական գրանցում «Լուսխաչ» ՍՊԸ-ի անվամբ, սեփականության իրավունքով 384.84 քմ մակերեսով առևտրի կենտրոնի, 1015.2 քմ մակերեսով անավարտ շինության և մշտական օգտագործման իրավունքով 0.63 հա մակերեսով հողամասի նկատմամբ: Այնուհետև.

1999 թվականի մարտի 24-ին գրանցվել են Մարտին Հովհաննիսյանի սեփականության իրավունքը 384.84 քմ մակերեսով առևտրի կենտրոնի, 1015.2 քմ մակերեսով անավարտ շինության և մշտական օգտագործման իրավունքը 0.63 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ 1999 թվականի մարտի 18-ի N 2-602 առուծախի պայմանագրի հիման վրա:

1999 թվականի դեկտեմբերի 17-ին գրանցվել են «Ինտերմոթոր Արմենիա» ՓԲԸ-ի սեփականության իրավունքը 1769.1 քմ մակերեսով հասարակական սննդի, առևտրի, կենցախսպասարկման, 46.2քմ էլ.ենթակայանի, 34.7 քմ մակերեսով պահակատան և վարձակալության իրավունքը 0.62485 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ «Ինտերմոթոր Արմենիա» ՓԲԸ-ի 13/10/1999 թվականի N 5 արձանագրության, Երևանի ՃՇՎ-ի 08/03/1999 թվականի նախագծի, «Նոր Նորք» թաղապետարանի 12/12/1999 թվականի N 16 շինարարության թույլտվության հիման վրա:

2005 թվականի մարտի 15-ին գրանցվում է «Ավանգարդ Մոթորս» ՓԲԸ-ի սեփականության իրավունքը 2224.6 քմ մակերեսով հասարակական սննդի, առևտրի, կենցախսպասարկման, 46.2քմ էլ.ենթակայանի,168.4 քմ մակերեսով դիագնոստիկ կայանի և 0.62485 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ լուծարվող բաժնետիրական ընկերության գույքը բաշխելու մասին 23/04/2004 թվականի N 1153 պայմանագրի, 02/03/2004 թվականի N 28-5/2-1039/1-23 շին.նախագծի հիման վրա:

2024 թվականի փետրվարի 8-ին Երևան քաղաք, Գայի պողոտա, 14/3 հասցեով, 01-008-0022-0119 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը բաժանվում է Երևան քաղաք, Նոր Նորք համայնք, Գայի պողոտա, 12/12 և Գայի պողոտա, 14/3 հասցեներով անշարժ գույքերի «Ավանգարդ Մոթորս» ՓԲԸ-ի անվամբ:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Երևան քաղաք, Նոր-Նորք համայնք, Գայի պողոտա, 14/3 հասցեով, 01-008-0022-0119 կադաստրային ծածկագրով և Երևան քաղաք, Նոր-Նորք համայնք, Գայի պողոտա, 12/12 հասցեով, 01-008-0016-0039 կադաստրային ծածկագրով անշարժ գույքերի կադաստրային գործերում մինչև 1995-1998 թվականները և 1995 թվականին նախորդող ժամանակահատվածում սեփականատերերի, իրավունքի ծեռքբերման հիմքերի մասին տեղեկատվություն և փաստաթղթեր առկա չեն (բացառությամբ վերոնշյալ N 45/22 որոշման և N 548 թույլտվության):

X ____________________________

Հարգանքով՝ Արամ Գուգարաց

Կատարող՝ Գ. Դեմիրչյան
Գրանցման վարչություն
Հեռ.՝ 060-474134